ցայ և շարժել նոցայ 'ի տեղէ 'ի տեղ իւրեանց և աւար յառնել 'ի յընչից նոցայ, կալով մնասցեն նոքայ 'ի տեղի իւրեանց հնազանդելով սեպհական տերանց իւրեանց։

ԳԼՈՒԽ ՅԶԸ.

Եթէ գուցէ թշնամին մեր 'ի ժամանակի պատերազմի գերեսցէ հասարակ ժողովրդենէ մերմէ, որ ոչ իցէ զինուոր և ոչ առեալ զէն և ոչ ընդդիմացեալ թշնամւոյն, հանիցէ 'ի տանէ և 'ի բնակութենէ իւրմէ առ այլ և աւար յարիցէ ստացուածք նորայ, պարտ է մեզ թիւ արկանել այնպիսի անձինք գերեցեալքն մեր և արժանաւորութիւն աւարից որ քան որ իցէ և մի՛ տալ խաղաղութիւն թշնամւոյն մերոյ մինչ յետս դարձուսցէ գերեալս մեր ընչիւք, և յաւելորդապէս մի և նոյն քանակութեամբ անձինք ևս 'ի ժողովրդենէ իւրմէ, և ինչ 'ի ստացուածէ իւրմէ յաւելցի մեզ իբր տոկոս վասն անկարգ արարմանց, որ խաղացուց սառն արեամբ կացող ժողովուրդն մեր 'ի սեպհական բնակութենէ իւրմէ, որ ոչ ձեռն 'ի սուր առեալ և ոչ ընդդիմացեալ նմայ, և յանձն առեալ հատուցանել նոցայ հարկ, մաքս, հաս և բաժինն որում հատուցանէր մեզ։

ԳԼՈՒԽ ՅԶԹ.

Մերոյ ըմբռնեցեալ տեղեաց որ 'ի թշնա-